ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Վարչութիւն հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյ Ծանուցանէ ի գիտութիւն ամենեցուն զյետագայս.

1. Ի Դպրոցական դասարանս ճեմարանիս ընկալեալ լինին թէ ուսեալքն ի թեմական և ծխական եկեղեցական դպրոցս և թէ պատրաստեալքն առանին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան աւարտողք ընթացս ուսման թեմական Դպրոցաց:

2. Յայսմ ամի ի դպրոցական դասարանս չկարեն ընկալեալ լինել աշակերտք յայնց տեղեաց, յորոց արդէն բազումք են ի ճեմարանիս. — յԱլէքսանդրապոլէ, յԱխալցխայ, ի Դաւրիժոյ (քաղաքէն), ի Կարուց, ի Վաղարշապատայ, ի Ղզլարէ (ի քաղաքէն), ի Շուշւոյ) (ի քաղաքէն), ի Թիֆլիսէ (ի քաղաքէն), յՕշականայ, ի Մեծ Սալայ և ի Թոփսի գեղից, Նոր-Նախիջևանի և ի Մեղրի գեղջէ: Իսկ աւարտեալքն ղիւլի դասընթացս թեմական դպրոցաց ընկալեալ լինին յառաջին լսարան:

3. Յանկացողք ի մտանել յաշակերտութիւն ճեմարանիս մատուցանեն զինքիր յանուն Ամենապատիւ Տէր Տեղակալի ց 25 Օգոստոսի, առաջի առնելով ընդ նմին զվկայագիրս ծննդեան, պատուաստման ծաղկի և ուսման այնր դասարանի թեմական կամ ծխական եկեղեց. Դպրոցի, ուստի խնդրատուն իցէ:

4. յԳ-րդ դասարան մտանեն պատանիք 14 — 16 ամեայք, ըստ այսմ համեմատութեան և ի յաջորդ դասարանս:

5. Աշակերտք ընկալեալ լինին ի դասարանս ըստ հարցաքննութեան: Վասն մտանելոյ յԳ-րդ դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երկդասեան եկեղեցական ծխական Դպրոցաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս — պատշաճ նոցին ուսումն ըստ ծրագրոյ՝ հաստատելոյ ի պէտս թեմական Դպրոցաց:

6. Յանկացողք մտանելոյ յառաջին լսարան հարցաքննին՝ 1. Ընդարձակ եկեղեցական պատմութիւն, 2. Ընդարձակ Քրիստոնէական վարդապետութեան եկեղեցւոյ Հայոց, 3. ի ծանօթութեան Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց, 4. ի լեզուս Հայոց, Ռուսաց և ի Ֆրանսիականին:

7· Ընկալեալքն ի հարցաքննելոց յաշակերտութիւն ճեմարանիս կանխաւ մատուցանեն ի գրաւ զ50 ռուբլիս, եթէ եկեալ են ի կովկասեան կողմանց. իսկ ի հեռաւոր և յարտասահման վիճակաց եկեալքն՝ զ75 ռուբլիս. որպէս զի հատուսցի նոցա այդ գումար ի ծախս վերադարձի ի հայրենիս եւս և ի գին կորուսեալ և վատնեալ գրոց և այլոց իրեղինաց. ըստ այսմ՝ վարին և աշակերտք ճեմարանիս, որք ցարդ չեն մատուցեալ զայդ գումար:

8· Բաց ի ձրիավարժից ընկալեալ լինին ի ճեմարանն նաև թոշակաւորք: Իւրաքանչիւր թոշակաւոր վճարէ ի տարին երկու հարիւր ռուբլիս, յերկուս նուագս՝ ի Սեպտեմբեր և Յունվար ամիսս:

9· Թոշակաւոր աշակերտք ճեմարանի, որոց չև եւս է հատուցեալ զթոշակ անցելոյ ամի պարտին մատուցանել զայն ի վերադարձի իւրեանց, որպէս և վասն առաջիկայ ուսումն կիսամեկի:

10· Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակիցի ի ճեմարանէ մինչև իցէ բոլորեալ կիսամեկին վճարելոյ, թոշակ նորա ոչ դարձուսցի յետս:

Տեսուչ Ճեմարանի՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ